



ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Մկրտչյան Թ., Վարդանյան Ք., Ավագյան Գ., Ղարաբյոզյան Մ.
(2025), ՀՀ տնտեսության մակրոտնտեսական խոցելիության գնահատումը,
Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 1(7), 9-36,
DOI: 10.52174/29538114_2025.1-9

Ներկայացվել է խմբագրություն՝ 26.05.2025 թ.

Ուղարկվել է գրախոսության՝ 27.05.2025 թ.

Երաշխավորվել է հրապարակման՝ 13.08.2025 թ.

ԹԱԹՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՊՏՀ կիրառական տնտեսագիտության ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

 <https://orcid.org/0000-0003-2057-8590>

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ կիրառական տնտեսագիտության ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0000-0002-7198-3740>

ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ՀՊՏՀ կիրառական տնտեսագիտության ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0000-0003-3395-2473>

ՄԵԼԱՆՅԱ ՂԱՐԱԳՅՈՂՅԱՆ

ՀՊՏՀ կիրառական տնտեսագիտության ամբիոնի դասախոս

 <https://orcid.org/0000-0002-3087-699X>

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Վերջին տարիներին հեղափոխությունը զարգացող երկրների տնտեսական խոցելիության նկատմամբ աճել է: Այս տասնամյակի տնտեսական բազմաթիվ ճգնաժամերը մատնանշում են այդ երկրների խոցելիությունը միջազգային շուկայի տատանումների նկատմամբ, իսկ ազդեցությունների չափի և բնույթի զգալի տարբերությունները կարևորում են տարբերակված մոտեցման անհրաժեշտությունը: ՀՀ տնտեսական զարգացման ընթացքում ձևավորվել են մի շարք հիմնախնդիրներ, մակրոտնտեսական ներքին անհավասարակշռություններ, որոնք ուժգնացնում են արտաքին շուկերը և

յունտեսությունը դարձնում առավել խոցելի: Ըստ այդմ՝ գլոբալ տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ինչպիսիք են մակարարարման շղթաների խախտումները, ֆինանսական շուկաների անկայունությունը, էականորեն սահմանափակում են ՀՀ տնտեսական զարգացման ներուժը: ՀՀ տնտեսության մակրոտնտեսական խոցելիության գնահատման նպատակով հստակեցվել են այն հիմնական գործոնները, որոնք նպաստում են տնտեսության անկայունության ծնավորմանը, և դրանց հիման վրա մշակվել է մակրոտնտեսական խոցելիության ինդեքս: Ուսումնասիրվել են խոցելիության ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած բաղադրիչների փոփոխության միտումները՝ դրանք դիտարկելով համաշխարհային տնտեսության գլոբալ փոփոխությունների համատեքստում: Խոցելիության տեսանկյունից դիտարկվել են ոչ միայն տնտեսության զարգացման միտումները, այլև բացահայտվել է, թե տնտեսական զարգացման որ փուլում որ ռիսկերը կամ խոցելիություններն են դառնում առաջնային: Կարարված վերլուծությունները թույլ են տվել պարզել, թե արտաքին մակրոմիջավայրի անհաշվեկշռվածություններն ինչ ազդեցություն են ունենում փոքր բաց տնտեսության, մասնավորապես՝ ՀՀ տնտեսության վրա և ինչ խողովակներով:

Հիմնաբառեր. տնտեսության խոցելիություն, խոցելիության ռիսկեր, տնտեսական կայունություն, տնտեսական շուկեր

JEL: C82, E60

DOI: 10.52174/29538114_2025.1-9

Ներածություն: Մակրոտնտեսական խոցելիությունը ժամանակակից տնտեսագիտության կարևորագույն խնդիրներից է, որն արտացոլում է երկրի տնտեսության կախվածությունն արտաքին ու ներքին ազդեցություններից և նրա ունակությունը՝ դիմակայելու տնտեսական ցնցումներին: Մակրոտնտեսական խոցելիության մակարդակը բնութագրում է երկրի տնտեսության ճկունությունը՝ արձագանքելու ճգնաժամային իրավիճակներին և նվազագույնի հասցնելու դրանց բացասական հետևանքները: Այս երևույթի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես կարելի է նվազեցնել տնտեսական ռիսկերը և ապահովել կայուն զարգացում, ինչպես նաև կարևոր է մակրոքաղաքականության մշակման տեսանկյունից:

Հոդվածի նպատակը մակրոտնտեսական խոցելիության վրա ազդող հիմնական գործոնների բացահայտմամբ ՀՀ մակրոտնտեսական խոցելիության գնահատումն ու հաղթահարման ուղիների մատնանշումն է:

Խոցելիության ուսումնասիրությունը թույլ է տալիս կառավարություններին մշակել կանխարգելիչ ռազմավարություններ և ուժեղացնել տնտեսության դիմադրողականությունը, այդ թվում՝ վերափոխել տնտեսական համակարգի կառուցվածքը՝ այն ավելի ճկուն դարձնելու նպատակով:

Հայաստանի տնտեսությունը հաճախ է ենթարկվում արտաքին և ներքին ազդեցությունների, որոնք զգալիորեն խաթարում են դրա տնտեսական կայունությունը: Վերջին տասնամյակի համաշխարհային շուկերը ցույց տվեցին, որ ՀՀ տնտեսությունը բավականին խոցելի է, և որ խոցելիության ռիսկերը ժամանակի հետ ոչ թե նվազում, այլ ուժեղանում են: ՀՀ մակրոտնտեսական խոցելիությունը դրսևորվում է մի շարք գործոնների միջոցով, ինչպիսիք են արտաքին առևտրային շուկերը, ռազմավարական ապրանքների՝ ներմուծումից ունեցած բարձր կախվածությունը, ֆինանսական շուկայի անկայունությունը, տարածաշրջանային լարվածությունները և այլն: Այս հանգամանքներն էական

նորեն սահմանափակում են երկրի տնտեսական զարգացման ներուժը՝ նպաստելով ոչ միայն տնտեսական անկայունությանը, այլև սոցիալական լարվածության խորացմանը, ներդրումային միջավայրի վատթարացմանը: Խնդիրը հատկապես սրվում է Հայաստանի նման երկրներում, որտեղ տնտեսական ճկունությունը սահմանափակվում է պետական բյուջեի սահմանափակ կարողություններով և արտաքին աղբյուրներից կախվածությամբ:

Վերոնշյալը փաստում է, որ ՀՀ տնտեսության խոցելիության հիմնախնդիրը պարբերաբար ուսումնասիրության և հետազոտության կարիք ունի, ինչն էլ պայմանավորում է հոդվածում արծարծվող հարցադրումների արդիականությունն ու կարևորությունը:

Գրականության ակնարկ: Մասնագիտական գրականության քննական ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ հետազոտող տնտեսագետները երկիրը համարում են խոցելի, եթե այն գտնվում է երկարաժամկետ անբարենպաստ զարգացման վտանգի տակ՝ արտաձին գործոնների շարունակականության պատճառով, որոնք չի կարող վերահսկել: Մակրոտնտեսական խոցելիությունը սահմանվում է որպես տնտեսության անկայունության և անհամամասնությունների համակցություն, որը բարձրացնում է տնտեսական ցնցումների ռիսկը: Խոցելիությունը ներառում է ներքին և արտաքին անհամամասնությունների կուտակումները, ինչպիսիք են ընթացիկ հաշվեկշռի պակասորդը, վարկային բումերը և անշարժ գույքի գների աճը¹: Այս ցնցումները ներառում են նաև բնական աղետները, մատակարարման խափանումները, հակամարտությունները, քաղաքացիական անկարգությունները, գլոբալ համաճարակները²՝ ունենալով ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ազդեցություններ:

Մակրոտնտեսական խոցելիությունը հաճախ դիտվում է որպես տնտեսության բացության և արտահանման կենտրոնացվածության արդյունքում տնտեսության ենթարկվածություն արտաքին ցնցումներին³: Տնտեսագիտական գրականությունում տարանջատում են մակրոտնտեսական խոցելիության ֆինանսական և տնտեսական դիտանկյունները՝ ֆինանսական խոցելիությանը վերագրելով արժուպային, պարտքային և բանկային ճգնաժամերի ռիսկերը, իսկ տնտեսական խոցելիությանը՝ տնտեսական աճի անկայունությունը, արտաքին ցնցումների ազդեցությունը⁴: Այս առումով ուշագրավ է տնտեսական ցնցումներին դիմակայելու՝ ՀՀ տնտեսության իրական և ֆինանսական հատվածների միջև եղած խզման հաղթահարման մարտահրավերների բացահայտ-

¹ St'u **Sondermann D., Zorell N.**, A macroeconomic vulnerability model for the euro area. European Central Bank 2019, էջ 3,

<https://www.ecb.europa.eu/pub/pdf/scpwps/ecb.wp2306~8907aafca2.en.pdf>

² St'u UN, High level panel on the development of a Multidimensional Vulnerability Index, Final Report, <https://digitallibrary.un.org/record/4049554?v=pdf>

³ St'u **Briguglio L., Cordina G., Farrugia N., Vella S.**, Economic vulnerability and resilience concepts and measurements. WIDER Research Paper, No. 2008/55, էջ 3, <https://www.econstor.eu/bitstream/10419/45146/1/571437761.pdf>

⁴ St'u **Seth A., Ragab A.**, Macroeconomic vulnerability in developing countries: Approaches and issues. Working Paper, No. 94, 2012, էջ 4, <https://www.econstor.eu/bitstream/10419/71809/1/72073648X.pdf>

մանը նվիրված հետազոտությունը⁵, որում կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ արտաքին և ներքին ցնցումների ազդեցության հետևանքով Հայաստանի տնտեսության խոցելիությունը մեծանում է հատկապես իրական և ֆինանսական հատվածների միջև առկա խզման պատճառով: Գրականության աղբյուրներում չեն անտեսված քաղաքական անկայունությունը և քաղաքականության անորոշությունը⁶:

2019–2020 թթ. COVID-19 համավարակի հետևանքների գնահատումները ցույց տվեցին, որ հատկապես զարգացող տնտեսությունները խիստ զգայուն են արտաքին պարտքի բեռի մեծացման հանդեպ: Այս տեսակետին են հանգել նաև արտաքին պարտքի խոցելիության փորձառական գնահատումները⁷: Ըստ այդ գնահատումների՝ ներքին պարտքը և տնտեսության բացությունը պասիվ դեր են խաղացել՝ չկարողանալով մեղմել արտաքին պարտքի խոցելիության բացասական ազդեցությունը: Գնահատման արդյունքում կապիտալի պաշարը առանձնացվել է որպես տնտեսական աճի խթանման միակ փոփոխական: Երկրներն առավել խոցելի են, երբ արտաքին պարտքը բարձր է տնտեսական կայունության և աճի ներուժից: Խոցելիության ռիսկերից մեկն էլ գնաճն է, որն էական է հատկապես վառելիքահումքային ռեսուրսների ներմուծումից կախվածություն ունեցող երկրների համար:

Արժույթի միջազգային հիմնադրամի 2023 թ. զեկույցում⁸ նշվում է, որ տարածաշրջանային հակամարտությունը ՀՀ-ի համար ստեղծում է անկանխատեսելի արտաքին շոկեր, մյուս կողմից էլ ռուս-ուկրաինական պատերազմը նոր տնտեսական շոկերի է հանգեցրել: ՀՀ ԿԲ-ն ֆինանսական կայունությանը սպառնացող հավանական ռիսկերը կապում է հատկապես աշխարհաքաղաքական բարձր անորոշությունների միջավայրում ապագա տնտեսական ակտիվության նվազման, ինչպես նաև գնաճային նոր ճնշումների առաջացման հետ⁹:

«ՀՀ տնտեսության վրա ազդող արտաքին շոկերը և դրանց տարածման ուղիները» հոդվածում¹⁰ հեղինակները ՀՀ տնտեսության վրա ազդող էական շոկեր են դիտարկել գործընկեր երկրների տնտեսական աճը, ֆինանսական շուկայի պայմանները և հումքային ակտիվների գները՝ վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելի միջոցով գնահատելով ՀՀ տնտեսության խոցելիությունն այդ

⁵ Տե՛ս Ավագյան Գ., Վարդանյան Ք., Գրիգորյան Կ., Տնտեսության իրական և ֆինանսական հատվածների խզման հաղթահարումը որպես տնտեսական ցնցումների (շոկերի) դիմագրավման պայման, ՀՀ ՊԿԱ «Հանրային կառավարում» գիտական հանդես, N2, «Պետական ծառայություն», Եր., 2019, էջ 113-119, <https://paara.am/wp-content/uploads/2012/04/HK-2019-2.pdf>

⁶ Տե՛ս Klompa J., De Haan J., Political institutions and economic volatility. Eur J Polit Econ. 2009; 25(3):311–26:

⁷ Edo S., Oigiangbe O. B., External debt vulnerability in developing countries: the economic and policy perspectives, Apr 2024, Journal of Financial Economic Policy, DOI: [10.1108/JFEP-05-2023-0129](https://doi.org/10.1108/JFEP-05-2023-0129)

⁸ Տե՛ս Republic of Armenia. IMF Country Report No. 23/416. 2023, <https://doi.org/10.5089/9798400262418.002>

⁹ Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2023, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability_Report_2023.pdf

¹⁰ Տե՛ս Բազինյան Ե., Բեջանյան Հ., Այրումյան Ա., Կարապետյան Ն., Ռոստոմյան Տ., ՀՀ տնտեսության վրա ազդող արտաքին շոկերը և դրանց տարածման ուղիները, «Բանբեր ՀՊՏՀ», 3(59), 2020, էջ 10-26, <https://asue.am/upload/files/science/banber/2020-year-3/1.pdf>

ուղղություններով: Կատարված վերլուծության հիմքով հեղինակները եզրակացրել են, որ ՀՀ տնտեսության համար էական են ՌԴ-ի, ԵՄ-ի, ԱՄՆ-ի տնտեսական աճի շոկերը՝ չնայած փոխանցման ուղիների տարբերություններին: Ֆինանսական շուկայի պայմանների և հումքային ակտիվների գների շոկերը ներգործում են հստակ մեխանիզմով: Հեղինակներն ընդգծում են, որ բոլոր շոկերն էլ ազդում են պետական հատվածի խոցելիությունն արտացոլող՝ կառավարության պարտքի բեռի վրա:

Հիմնախնդրի վերաբերյալ գրականության աղբյուրները փաստում են, որ ՀՀ տնտեսության խոցելիությունը տնտեսության խոցելիության ինդեքսի կառուցվածքային մոտեցման փոխարեն դիտարկվում է տնտեսությանը հասցվող կարճաժամկետ շոկերի տեսանկյունից: ՀՀ տնտեսության խոցելիությունը գիտական աշխատանքներում քննարկվում է արտաքին շոկերի՝ հիմնական արտահանվող ապրանքների համաշխարհային գների տատանումների և խոշոր առևտրային գործընկերների տնտեսական վիճակից կախման համատեքստում:

Հետազոտության մեթոդաբանություն: Տարբեր գիտնականներ կարևորել և շեշտադրել են մակրոտնտեսական խոցելիության առանձին դրսևորումներ և մեխանիզմներ, որի արդյունքում էլ խոցելիության գնահատման առաջարկվող ինդեքսները տարբերվում են ինչպես ներառված բաղադրիչներով, այնպես էլ հաշվարկման մեթոդներով: Տնտեսական խոցելիության գնահատումը գիտական ուսումնասիրությունների շրջանակում հաճախ դիտվում է որպես միջոց՝ երկրների տնտեսական կայունության գնահատման համար¹¹: Տնտեսական խոցելիությունը չափվում է Միավորված ազգերի կազմակերպության կողմից մշակված տնտեսական խոցելիության ինդեքսի (EVI) միջոցով¹², որը տնտեսական և շրջակա միջավայրին հասցվող շոկերի հիմնական խմբերում ներառված ութ փոփոխականների կշռված միջինն է: Քանի որ ինդեքսի բաղկացուցիչ գրեթե բոլոր ցուցանիշները ներկայացվում են տարբեր չափման միավորներով, բոլոր ցուցանիշները նորմալացվում են՝ յուրաքանչյուր ցուցանիշի համար ՄԱԿ-ի կողմից սահմանված ստորին և վերին շեմերին¹³ համապատասխան, այնուհետև ներառվում են ինդեքսում:

Այս ցուցանիշը ներկայումս կիրառվում է զարգացման ամենացածր մակարդակ ունեցող երկրների (LDC) խոցելիության գնահատման նպատակով: Տնտեսական խոցելիության ինդեքսը տնտեսական խոցելիությունը դիտարկում է կառուցվածքային տեսանկյունից՝ կենտրոնանալով երկարաժամկետում երկրի աճը խոչընդոտող գործոնների վրա: Որոշ հետազոտողներ առաջարկում են ընդլայնել այս ինդեքսը՝ հաշվի առնելով տնտեսության ճկունության հետ կապված լրացուցիչ փոփոխականները, այսինքն՝ ցնցումից հետո վերա-

¹¹ St'u UN Committee for Development Policy, Review of the least developed country criteria, 2023, <https://www.un.org/development/desa/dpad/wp-content/uploads/sites/45/CDP-excerpt-2023-4.pdf>, Foundation FERDI. The Retrospective Economic Vulnerability Index, 2015 Update, <https://ferdi.fr/en/indicators/a-retrospective-economic-vulnerability-index>

¹² St'u United Nations, Department of Economic and Social Affairs, Least Developed Countries, LDC Data, "Time series estimates", <https://www.un.org/development/desa/dpad/least-developed-country-category/ldc-data-retrieval.html>)

¹³ St'u **Carolle J.**, *The Economic Vulnerability Index- 2010 Update*, Working Papers 109, FERDI, 2011, էջ 9:

կանգնվելու երկրի կարողությունը¹⁴:

Հետազոտության շրջանակներում օգտագործվել են որոշակի մոտեցումներ տնտեսական խոցելիության գնահատման մեթոդաբանություններից, որոնք հարմարեցվել են՝ հաշվի առնելով ուսումնասիրվող մակրոմիջավայրի առանձնահատկությունները, վերամշակվել են՝ առավել ճշգրիտ արդյունքներ ապահովելու նպատակով:

Ինդեքսի հաշվարկման համար ընտրվել են երկրի մակրոտնտեսական խոցելիության վրա մեծ ազդեցություն ունեցող 10 այլ ցուցանիշներ՝ Ռ-7 մասնաբաժինն արտահանման կառուցվածքում (%), պղինձ, տարեկան գներ, իրական փոխարժեք՝ ԱՄՆ դոլար (\$/mt), ստացված անձնական տրանսֆերտներ (% ՀՆԱ), վերջնական սպառման ծախսեր (% ՀՆԱ), գնաճ, սպառողական գներ (տարեկան %), գործազրկություն (ընդհանուր աշխատուժի %, ԱՄԿ մոդելավորված գնահատում), զուտ միգրացիա, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, զուտ ներհոսքեր (% ՀՆԱ), իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքս (2010 = 100), կառավարության ընդհանուր համախառն պարտքը (% ՀՆԱ):

Հաշվի առնելով նշված ցուցանիշները՝ հաշվարկվել են ինդեքսներ՝ երկրի մակրոտնտեսական խոցելիության մեկնաբանման համար: Առանձնացվել է երկու ժամանակահատված՝ 1998–2010 թթ. և 2011–2023 թթ.՝ ժամանակի ընթացքում մակրոտնտեսական խոցելիության շարժընթացը բացահայտելու նկատառումով: Տարբեր տարիների տվյալների միջինացման միջոցով ապահովվում է խոցելիության ավելի երկարաժամկետ և կայուն գնահատում:

Ցուցանիշներից յուրաքանչյուրի համար հաշվարկվել է Z-score, որը հնարավորություն է տվել նորմալացնելու տվյալները՝ վերածելով դրանք միասնական չափորոշիչների¹⁵: Z-score-ի արդյունքում ստացված տվյալները տատանվել են (-3, 3) թվերի միջակայքում, ուստի բացասական արժեքներից խուսափելու նպատակով, որպես հաջորդ քայլ՝ Z-score-ով նորմալացված ցուցանիշները մշակվել են Min-Max մեթոդով՝ տվյալները բերելով 0-1 միջակայքի:

PCA-ի¹⁶ կիրառմամբ գնահատվել են այն հիմնական բաղադրիչները, որոնք ամենաշատն ազդում են խմբի ընդհանուր փոփոխության վրա՝ ճշգրիտ համադասավորելով ցուցանիշների կշիռները: Վերջնական ինդեքսի հաշվարկի համար յուրաքանչյուր ցուցանիշի նորմալացված արժեքը բազմապատկվել է PCA մեթոդով ստացված համապատասխան կշռով, ապա արդյունքները գումարվել են:

Դիտարկվել են նաև ՄԱԿ-ի զարգացման քաղաքականության կոմիտեի կողմից հաշվարկվող ընդհանրական INFORM և բազմախոցելիության MVI ինդեքսները:

INFORM ինդեքսն ունի երեք չափում՝ վտանգ և ազդեցություն, խոցելիություն և հաղթահարման կարողություն¹⁷:

¹⁴ St'u **Guillaumont P.**, An economic vulnerability index: its design and use for international development policy. *Oxf Dev Stud.* 2009, 37(3):193–228:

¹⁵ St'u **Al-Faiz Mohammed Z., Ibrahim Ali A., Hadi Sarmad M.**, The effect of Z-Score standardization (normalization) on binary input due the speed of learning in back-propagation neural network. 2019, DOI:[10.31987/ijct.1.3.41](https://doi.org/10.31987/ijct.1.3.41)

¹⁶ St'u **Abdi H. and Williams L. J.**, Principal component analysis 2010, <https://personal.utdallas.edu/~herve/abdi-awPCA2010.pdf>

¹⁷ St'u European Commission, INFORM Index for Risk Management, Concept and Methodology Version 2017, **Marin-Ferrer M., Vernaccini L., Poljansek K.**, Joint Research Centre 2017, <https://drmkc.jrc.ec.europa.eu/inform-index/INFORM-Risk/Methodology>

Վտանգի և ազդեցության չափանիշն արտացոլում է որոշակի վտանգների հետ կապված ֆիզիկական ազդեցության հավանականությունը և ներառում է բնական ու մարդածին վտանգները, որոնք ամփոփվում են երկրաչափական միջինով, որտեղ երկու ցուցանիշներն էլ հավասար կշիռ ունեն չափանիշի շրջանակներում:

Հաղթահարման կարողության չափանիշը չափում է երկրի կարողությունը՝ հաղթահարելու աղետները՝ ֆորմալ, կազմակերպված գործունեության և երկրի կառավարության ջանքերի, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող առկա ենթակառուցվածքների առումով: Դա ամփոփվում է երկու հասկացությունների՝ ինստիտուցիոնալ և ենթակառուցվածքային երկրաչափական միջինով:

Խոցելիության չափանիշը ներկայացնում է համայնքի տնտեսական, քաղաքական և սոցիալական բնութագրերը, որոնք կարող են անկայունանալ վտանգի դեպքում: Ֆիզիկական խոցելիությունը, որը վտանգից կախված բնութագիր է, առանձին է դիտարկվում վտանգի և ազդեցության չափանիշում:

MVI-ը ներառում է խոցելիության երկու հենասյուն.

1. կառուցվածքային խոցելիություն, որը կապված է երկրի անբարենպաստ արտաքին ցնցումների և սթրեսային գործոնների ազդեցության հետ,
2. կառուցվածքային դիմադրողականության բացակայություն, որը կապված է երկրի՝ նման ցնցումներին դիմակայելու կարողության բացակայության հետ:

Հայեցակարգային շրջանակը մշակում է կայուն զարգացման երեք չափումները՝ յուրաքանչյուր հենասյան նկատմամբ կիրառելիության համաձայն:


Ներկայացվել են մակրոտնտեսական խոցելիության ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած բաղադրիչների փոփոխության միտումները՝ համաշխարհային տնտեսության գլոբալ փոփոխությունների համատեքստում: Շուկայի փոխանցումային մեխանիզմների և շղթաների բացահայտումը հիմնվել է ինչպես թվային տվյալների դինամիկ և համեմատական վերլուծության, այնպես էլ այլ գիտնական հետազոտողների և հետազոտական կենտրոնների ուսումնասիրությունների արդյունքների վրա:

Հիմնվելով գիտական ուսումնասիրությունների արդյունքների վրա՝ տնտեսության խոցելիության գնահատման համար առանձնացվել են տնտեսության անկայունության ձևավորմանը նպաստող հիմնական գործոնները, որոնց հիմքի վրա մշակվել է մակրոտնտեսական խոցելիության ինդեքս, որն առավել ճշգրիտ կգնահատի ՀՀ տնտեսության խոցելիությունը:

Վերլուծություն: Հայաստանի տնտեսությունն ունի կառուցվածքային թերություններ, որոնք բարձրացնում են արտաքին և ներքին տնտեսական ցնցումների նկատմամբ խոցելիության մակարդակը:

2012–2023 թթ. ՀՆԱ կառուցվածքում ավելի քան 2 անգամ նվազել է գյուղատնտեսության մասնաբաժինը՝ 17,9%-ից հասնելով 8,5%-ի, 1,7 անգամ կրճատվել է շինարարության մասնաբաժինը՝ 11,7%-ից հասնելով 6,9%-ի (գծապատկեր 1): Ի տարբերություն այս ճյուղերի՝ մյուս առանցքային ճյուղերի մասնաբաժինները չափավոր աճի միտում են ունեցել: Մասնավորապես, դրական զարգացումներ՝ 17,9% աճ է գրանցել մշակող արդյունաբերությունը՝ 2016 թ.

տնտեսության զարգացումը խիստ զգայուն է դարձնում արտաքին մակրոմիջավայրի փոփոխությունների հանդեպ: Դա մեկ անգամ ևս ապացուցեց COVID-19-ի շոկը, երբ 2020 թ. տնտեսության 7,4 տոկոս անկումն առավելապես պայմանավորված էր ծառայությունների և շինարարության ճյուղերի, նաև մշակող արդյունաբերության նվազումներով²⁰:



Գծապատկեր 2. ՀՆԱ իրական ծավալի ինդեքսները 2023 թ., նախորդ տարվա նկատմամբ, տոկոս²¹

Հայաստանի մակրոտնտեսական խոցելիությունը զգալի չափով պայմանավորված է Ռուսաստանի տնտեսությունից կախվածությամբ: 2023 թ. ՀՀ արտահանման 41.4%-ը և ներմուծման 34.4%-ը բաժին են ընկել Ռուսաստանին: Ընդ որում, 2020–2023 թթ. ՌԴ ներմուծման ծավալն աճել է ավելի քան 3 անգամ, իսկ արտահանմանը՝ 5 անգամ²². ՀՀ-ն, նախկին խորհրդային պետությունների հիմնական մասի նման, օգտվեց պատժամիջոցների հետևանքով

²⁰ ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, 2020, էջ 14, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability%20report_2021.pdf

²¹ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ տվյալների բազա, իրական հատվածի վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx>

²² Ցուցանիշները հաշվարկել են հեղինակները՝ հիմք ընդունելով ՀՀ ՎԿ պաշտոնական տվյալները, <https://www.armstat.am/am/>

ՌԴ և իր գործընկեր երկրների մեծ մասի առևտրային կապերի փլուզումից՝ հնարավորինս լրացնելով ռուսական շուկայում առաջացած վակուումը: Այս ալիքը խթանեց նաև վերաարտահանման նպատակով կատարվող ժամանակավոր բնույթ կրող ներմուծումը:

ՀՀ տնտեսությունը խոցելի է նաև արտահանման ապրանքային կառուցվածքի առումով: Չնայած տնտեսության կառուցվածքում հանքարդյունաբերության մասնաբաժինը վերջին տասնամյակում տատանվել է 2–3 տոկոսի սահմաններում, հիմնական հումքային ապրանքներից մեկը պղնձի հանքարն է: Դրա մասնաբաժինը արտահանման ծավալում 2012–2017 թթ. 13,3%-ից հասել է 30,1%-ի²³: Որպես հետևանք՝ արտաքին պահանջարկի տատանումները և պղնձի համաշխարհային գների փոփոխությունները էական ազդեցություն են ունեցել երկրի տնտեսական կայունության վրա: Դրական միտումներ են գրանցվել 2022–2023 թթ., երբ այս ապրանքատեսակի մասնաբաժինը կտրուկ նվազել է՝ կազմելով արտահանման ծավալի 5,7%-ը, դրանով իսկ նվազեցնելով խոցելիության ռիսկերը:

ՌԴ-ից առևտրային կախվածությունն առաջացնում է մի քանի ռիսկեր. ռուբլու արժեզրկման կամ ՌԴ գների մակարդակի անկման պարագայում Հայաստանի արտահանողները լուրջ վնասներ են կրում, իսկ ռուսական շուկայի պահանջարկի հաճախակի փոփոխություններն ազդում են ՀՀ արտաքին առևտրի ծավալների վրա:

Հայաստանի տնտեսության զգայունությունը ռուսական շուկայի փոփոխություններից հատկապես մեծացնում է ռուսական ցորենից ու էներգակիրներից ունեցած մեծ կախվածությունը: Ցորենով ինքնաբավության մակարդակը 2012–2023 թթ. 32,9 տոկոսից հասել է 48,8 տոկոսի²⁴, ընդ որում, ներկրվող ցորենը գրեթե ամբողջությամբ ներմուծվում է ՌԴ-ից: ՌԴ ցորենի արտահանման գները ՀՀ-ում ցորենի գնի ձևավորման հիմքն են, ուստի նշված ապրանքների գնային տատանումները պայմանավորող գործոնը ՌԴ արտահանման գների փոփոխությունն է²⁵: Ցորենի ձեռքբերման գները էական ազդեցություն են ունենում ալյուրի, հացի ու հացամթերքի գների վրա:

Ինչ վերաբերում է էներգակիրներին, ապա 2017–2022 թթ. Հայաստանը իր էներգետիկ պահանջարկի առավելագույնը 33,7%-ն է կարողացել բավարարել էներգիայի ներքին արտադրությամբ: Գազն ու նավթամթերքը ամբողջությամբ ներկրվում են, որի 87,5%-ը՝ ՌԴ-ից²⁶:

Ելնելով այս ապրանքների ռազմավարական բնույթից՝ կարող ենք ասել, որ դրանց ներմուծման գների փոփոխությունը կարող է ՀՀ տնտեսության անկայունության հիմք հանդիսանալ:

²³ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա, <https://www.armstat.am/am/>

²⁴ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա, ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքախմբերի/ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb

²⁵ Տե՛ս Մկրտչյան Թ., Դարագյուղյան Մ., Պողոսյան Վ., Ցորենի միջազգային գների փոփոխությունը պայմանավորող գործոններն ու դրանց ազդեցությունը ՀՀ ցորենի և ալյուրի շուկաների վրա, Բանբեր ՀՊՏՀ, 4(60), ISSN 1829-0280, Եր., 2020, էջ 109, <https://asue.am/upload/files/science/banber/2020-year-4/6.pdf>

²⁶ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա, <https://www.armstat.am/am/>

Մակրոտնտեսական խոցելիության փոխանցումային մեխանիզմներից մեկն էլ գնաճն է, որը հիմնականում ձևավորվում է արտաձին գործոնների ազդեցությամբ: ՀՀ-ում բարձր գնաճային միջավայր ձևավորվել է 2021–2022 թթ.²⁷ մեծացնելով երկրի տնտեսական խոցելիությունը: 2021 թվականի սկզբից գնաճն արագացել է, իսկ բարձր գնաճային միջավայրը պահպանվել է ողջ տարվա ընթացքում: Գնաճի կառուցվածքում էական է եղել ներմուծված պարենային և ոչ պարենային ապրանքների գների աճը, որը կրել է միջազգային ապրանքահումքային շուկաներում պահպանվող բարձր գնաճային միջավայրի ազդեցությունը²⁷: Գնաճն ավելի է արագացել 2022 թ.²⁸ ռուս-ուկրաինական հակամարտության սրմամբ պայմանավորված, որը միջազգային ապրանքահումքային շուկաներում առաջացրել է էներգակիրների և պարենային ապրանքների գների կտրուկ աճ՝ թանկացնելով նաև ՀՀ ներմուծումը: ՀՀ գնաճին նպաստել է նաև միջազգային այցելուների և ֆինանսական միջոցների մեծաքանակ ներհոսքի արդյունքում ձևավորված բարձր պահանջարկը, հատկապես ծառայությունների ոլորտում: Միաժամանակ, ֆինանսական մեծ ներհոսքի ազդեցությամբ տարվա ընթացքում ՀՀ արժույթային շուկայում դիտվել է դրամի շարունակական արժևորում՝ որոշակիորեն զսպելով գնաճային դրսևորումները:

2023–2024 թթ. արտաքին հատվածից փոխանցվող գնանկումային ազդեցությունների թուլացման, նախորդ տարիներին իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության և դրամի շարունակական արժևորման պայմաններում գնաճային միջավայրը զգալիորեն մեղմվել է, գնաճը մոտեցել է թիրախային մակարդակին: Այնուամենայնիվ, աշխարհաքաղաքական լարվածության հետագա սրման պարագայում գնաճային նոր ճնշումների առաջացման հետ կապված ռիսկերը բարձր են: Բարձր գնաճը կարող է վկայել արտաքին շուկերի, մատակարարման շղթաների կամ արժույթի անկայունության մասին, ինչպես դա եղավ 2022 թ., երբ ՍԳԻ-ն հասավ 110.3%-ի²⁸: Գնաճի՝ արտաքին ազդակներից ունեցած մեծ զգայունությունը մեծացնում է տնտեսության խոցելիությունը, որն արտահայտվում է անորոշություններով պայմանավորված բացասական սպասումներով, ազգային արժույթի նկատմամբ անվստահությամբ, տնային տնտեսությունների սպառողական ծախսերի ավելացմամբ, խնայողությունների կրճատմամբ:

Խոցելիության ռիսկեր են առկա նաև ամբողջական պահանջարկի կառուցվածքում: Սպառողական ծախսերը 2012–2023 թթ. կազմել են տնտեսության ընդհանուր պահանջարկի, միջին հաշվով, 77,4 տոկոսը: Սակայն սպառում/ՀՆԱ հարաբերակցության փոփոխության միտումները նվազման ուղղությամբ են, որն արագացել է հատկապես 2019–2023 թթ.²⁹ ՀՆԱ աճին զուգընթաց, սպառման մասնաբաժինը ՀՆԱ-ում նվազել է՝ 82,78%-ից հասնելով 64,86%-ի (զծապատկեր 3): Ընդ որում, սպառողական պահանջարկի մի մասը բավարարվել է վարկերի հաշվին. 2024 թ. ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված 50,082.3 մլրդ ՀՀ դրամ²⁹ ծավալով ընդհա-

²⁷ Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն (2021 թ. 1-ին եռ. – 2021 թ. 4-րդ եռ.), էջ 6,


<https://www.cba.am/AM/ppperiodicals/MP%20report%202021Q4.pdf>

²⁸ Նույն աղբյուրը, էջ 2:

²⁹ Տե՛ս ՀՀ ԿԲ տվյալների բազա, <https://www.cba.am/am/sitepages/default.aspx>

նուր վարկերի 24,2%-ը կազմել են սպառողական վարկերը, 23,7%-ը՝ հիպոտեկային վարկերը: Չնայած ներկա կառուցվածքը խոցելիության ռիսկեր է առաջացնում, այնուամենայնիվ, միտումները դրական են: Վերջին տարիներին վարկավորման աճը համահունչ է եղել ՀՆԱ աճին, և տնային տնտեսությունների պարտքի բեռը գրեթե անփոփոխ է մնացել, միաժամանակ՝ վարկավորման պայմանների բարելավումը, վարկերի ժամկետայնության աճը որոշ չափով նվազեցրել են պարտքի սպասարկման բեռը: 2023 թ. տնային տնտեսությունների վարկ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 27.1%՝ վերջին երեք տարիներին մնալով գրեթե անփոփոխ³⁰:

Բնակչության եկամուտների նվազման դեպքում սպառողական վարկերի աճը տնտեսության վրա ճնշում կգործադրի: Մյուս կողմից՝ հիպոտեկային վարկավորման բարձր մակարդակը պայմանավորված է ժամանակավոր գործոններով, որոնց ազդեցությունը ներկայումս մարում է՝ նվազեցնելով վարկառուների վճարունակությունը: Սա կնվազեցնի սպառողական ծախսերը՝ առաջացնելով տնտեսության խոցելիության ռիսկեր:




Գծապատկեր 3. ՀՀ տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը 2012–2023 թթ.³¹

Սպառման վրա արտաքին շուկերի փոխանցման յուրահատուկ գործիք են տնային տնտեսությունների եկամուտների ձևավորման աղբյուր հանդիսացող **դրամական փոխանցումները և անձնական տրանսֆերտները**: Այս ցուցանիշների 2004–2023 թթ. դինամիկան վկայում է արտաքին մակրոմիջավայրից դրանց ունեցած մեծ զգայունության մասին: Չնայած 2015 թ-ից դրամական փոխանցումները նվազել են, սակայն 2022 թ. դրանք կտրուկ աճել են՝ կազմելով 2005.49 մլն ԱՄՆ դոլար, որը պատմական առավելագույնից՝ 2013 թ. ցուցանիշից փոքր է ընդամենը 154,51 մլն դոլարով³²: 2022 թ. աճը հիմնական-

³⁰ Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2023, էջ 23, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability_Report_2023.pdf
³¹ ՀՀ ՎԿ տվյալների բազա, [https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_1%20Economy%20and%20finance_15%20National%20Accounts_151%20SNA%202008_151%20Annual%20data_15112%20Expenditure%20of%20GDP%20\(by%20main%20consumption%20elements\)/EF-NA-08AE01.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb](https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_1%20Economy%20and%20finance_15%20National%20Accounts_151%20SNA%202008_151%20Annual%20data_15112%20Expenditure%20of%20GDP%20(by%20main%20consumption%20elements)/EF-NA-08AE01.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb)
³² Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ տվյալների բազա, արտաքին հատված, <https://www.cba.am/am/sitepages/default.aspx>

նում պայմանավորված էր ՌԴ-ից կապիտալի փախուստով և ռուս ռելյանսների անձնական փոխանցումների ծավալների աճով: Անձնական տրանսֆերտների մասնաբաժինը դրամական փոխանցումների ծավալում զգալիորեն բարձր է եղել հատկապես 2020–2022 թվականներին՝ հասնելով մինչև 73.1%-ի³³՝ պայմանավորված համավարակի և արցախյան պատերազմի հետևանքների վերացման նպատակով արտերկրում բնակվող հայերի՝ հայաստանաբնակներին ֆինանսական աջակցության ավելացմամբ:



Գծապատկեր 4. ՀՀ դրամական ներհույքերը և անձնական փոխանցումները 2012–2023 թթ.³⁴


Արդյունքում՝ ՀՀ բնակչության մի ստվար հատվածի կենսամակարդակը ուղղակիորեն կախվածության մեջ է արտաքին տնտեսական զարգացման միտումներից: Այն հանգամանքը, որ փոխանցումների մոտ 64.3 տոկոսը³⁵ Ռուսաստանից է, ՀՀ տնտեսության խոցելիությունն էլ ավելի է մեծանում՝ հաշվի առնելով ՌԴ տնտեսական ու քաղաքական առկա հիմնախնդիրները:

Դրամական փոխանցումների վրա անմիջական ազդեցություն են ունենում փոխարժեքների տատանումները, որոնք արտաքին ազդակների անմիջական կրողներն ու փոխանցողներն են և խոցելիության մեծ ռիսկեր են պարունակում: 2012–2023 թթ. իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների ինդեքսներն ունեցել են աճի միտում. 2012–2020 թթ. համապատասխանաբար՝ տարեկան միջինը 2,2 և 4,5 տոկոս, իսկ 2021–2023 թթ.՝ 24.3 և 29.7 տոկոս: Այս միտումն, անշուշտ, որոշակիորեն նվազեցրել է արտահանման մրցունակությունը և բարձրացրել արտաքին շուկերին հակազդելու ռիսկը: Ընդ որում, 2022 թ. կտրուկ արժևորումը արտարժույթի մեծ ներհույքի արդյունք էր՝ պայմանավորված ռուսական տնտեսությունից կապիտալի փախուստով, որը վկայում է փոխարժեքների՝ արտաքին ազդակներից ունեցած մեծ ազդեցության մասին:

³³ Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա, <https://www.worldbank.org/ext/en/home>

³⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ տվյալների բազա, արտաքին հատված, <https://www.cba.am/am/sitepages/default.aspx>

³⁵ Տե՛ս ՀՀ ԿԲ արտաքին հատվածի վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>




Գծապատկեր 5. Իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների ինդեքսները և աճի տեմպերը 2012–2024 թթ.³⁶

Ֆինանսական սակավ ռեսուրսների պատճառով ՕՌԻՆ-ները՝ հատկապես տնտեսության իրական հատվածում կատարված, դրական ազդակներից բացի, առաջացնում են որոշակի ռիսկեր։ Մասնավորապես՝ տնտեսությունը զգայուն է դառնում արտաքին ֆինանսավորման, հետևաբար՝ արտաքին ֆինանսական շուկայի փոփոխությունների նկատմամբ։ 2014 թ. ՕՌԻՆ-ների զուտ հոսքերի մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 3,37 տոկոս։ Հետագա տարիներին դա կրճատվել է և աճ գրանցել արդեն 2021–2023 թթ.³⁶ կազմելով 2,67 տոկոս։ Ծավալային առումով, 2014–2023 թթ. ՕՌԻՆ-ների զուտ հոսքերն ավելացել են 55.4%-ով։ ՕՌԻՆ-ների հոսքերը, խիստ զգայուն լինելով համաշխարհային շուկերի և անկայունությունների հանդեպ, արձագանքել են 2015–2016 թթ. ֆինանսական համակարգի և 2019–2020 թթ. COVID-19 համավարակով պայմանավորված շուկերին։ Առավել կտրուկ էր COVID-19-ի շուկի արձագանքը, երբ 2019 թ. ՕՌԻՆ-ների զուտ հոսքերը նախորդ տարվա նկատմամբ գրանցեցին 120 տոկոս անկում, կազմելով բացասական մեծություն, իսկ 2020 թ.³⁶ մոտ 57 տոկոս անկում։ Հաջորդող տարիներին, շնորհիվ բարենպաստ արտաքին տնտեսական գործոնների, հաջողվել է առաջանցիկ տեմպերով բարելավել այս ցուցանիշը։ ՕՌԻՆ-ի զուտ հոսքերը Հայաստանի տնտեսության իրական հատվածում կազմել են 292945,3 մլն դրամ՝ 55,4%-ով ավելի, քան 2022 թ.։ Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերի կախվածությունն արտաքին շուկերից տնտեսության համար խոցելիության ռիսկեր է ստեղծում։

ՀՀ տնտեսության խոցելիության ռիսկերից է նաև մտահոգիչ չափերի հասնող տարածքային զարգացման անհամաչափությունը։ Երկրի բնակչության գրեթե կեսը բնակվում է մայրաքաղաքում և դրա հարևանությամբ, որտեղ էլ գեներացվում է ՀՆԱ կեսից ավելին։ Այստեղ և խիստ սահմանափակ թվով մարզերում, մասնավորապես՝ Այունիքում և Կոտայքում, կենտրոնացել է տնտեսական զարգացումը՝ առաջացնելով բնակչության կենսամակարդակի զգալի տարբերություններ՝ տարածքային առումով։ Այսպես՝ մարզերում մեկ շնչի հաշվով ՀՆԱ նվազագույն ու առավելագույն շեմերի՝ ազգային միջինի

³⁶ Գծապատկերը կազմվել է ՀՀ ԿԲ տվյալների բազայի ցուցանիշների և հեղինակների հաշվարկների հիման վրա, <https://www.cba.am/am/sitepages/default.aspx>

նկատմամբ տարբերությունները 2023 թ. կազմել են համապատասխանաբար՝ 36,28% և 165,95%³⁷, այն դեպքում, երբ 2012 թ. այդ ցուցանիշները եղել են 57% և 149%³⁸: ՀՀ տնտեսական զարգացմանը զուգընթաց, այս հիմնախնդիրը ոչ թե նվազել, այլ ավելի է սրվել: Սա հետևանք է ինչպես գործազրկության մարգային մակարդակների միջև եղած զգալի տարբերության, որի ծայրագույն շեմերը 2023 թ. կազմել են 4% և 23,3%՝ 2012 թ. 5%-ի և 25,8%-ի փոխարեն³⁹, այնպես էլ մեկ զբաղվածի հաշվով ՀՆԱ մեծության զգալի տարբերության: 2022 թ. հանրապետական միջինի նկատմամբ վերջինիս ծայրագույն շեմերը կազմել են 38% և 179%⁴⁰, որը արտադրողականության՝ ըստ մարզերի տարբերության արդյունք է: Ստեղծված իրավիճակը հանգեցրել է աղքատության մարգային մակարդակների մեծ տարբերությունների: Հանրապետության 7 մարզերում բնակչության 20%-ից ավելին համարվում է աղքատ: Ընդ որում, աղքատության ամենաբարձր մակարդակ ունեցող մարզի՝ Շիրակի ցուցանիշը (43,1%) ավելի քան 6 անգամ գերազանցում է ամենաբարեկեցիկ մարզի՝ Սյունիքի ցուցանիշը (7%): Տնտեսական զարգացումը զսպող և խոցելի դարձնող այս անհամաչափությունները լուրջ մարտահրավերներ են:



Գծապատկեր 6. ՕՌՆ-ների զուտ հոսքերը ՀՀ տնտեսության իրական հարվածում, 2014–2023 թթ. ⁴¹


³⁷ Ցուցանիշները հաշվարկել են հեղինակները՝ հիմք ընդունելով ՀՀ ՎԿ պաշտոնական տվյալները՝ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2024, էջ 33, https://armstat.am/file/article/marzer_2024_5.pdf

³⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2016–2025 թվականների տարաձեռնալի զարգացման ռազմավարություն, Հավելված ՀՀ Կառավարության 2016 թ. հուլիսի 29-ի նիստի N 29 որոշման, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=86050>

³⁹ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_23%20Employment%20and%20unemployment/PS-eu-1-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb

⁴⁰ Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2024, էջ 34, https://armstat.am/file/article/marzer_2024_5.pdf

⁴¹ ՀՀ ՎԿ տվյալների բազա, <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>



Գծապատկեր 7. Աղբատության մակարդակի ցուցանիշները 2023 թ., տոկոս⁴²

Խոցելիության ռիսկեր են գեներացված նաև գործազրկության մշտապես բարձր մակարդակով: Չնայած 2012–2023 թթ. գործազրկության միջին մակարդակը կրճատվել է՝ կազմելով 12,4 տոկոս, սակայն մարզային մակարդակների միջև եղած տարբերությունները պահպանվել են:

Աշխատանքի շուկայում երկար ժամանակ պահպանվող անբավարար պահանջարկը՝ սոցիալ-տնտեսական այլ անբարենպաստ գործոնների համադրությամբ, դեռևս ՀՀ անկախության առաջին տարիներից սկիզբ են դրել բնակչության մեծածավալ միգրացիայի՝ նվազեցնելով տնտեսական աճի ներուժը: Միգրացիոն զուտ հոսքերի ավանդական բացասական մնացորդը 2020 թ. փոխվել է դրականի՝ հիմնականում պայմանավորված հակահամավարակային միջպետական հոսքերի սահմանափակումներով: Դրական մնացորդ է արձանագրվել նաև 2022–2023 թթ.՝ ռուս-ուկրաինական պատերազմով թելադրված ռեյդանների մեծածավալ ներհոսքով: Սակայն այս դրական միտումները ձևավորվել են արտաժին գործոններով:

Վերջին տարիներին ՀՀ տնտեսության խոցելիությունը մեծացել է՝ պայմանավորված նաև պետական պարտքի ծավալների արագացող աճով: Պետական բյուջեի պակասուրդով թելադրված՝ Հայաստանի պետական պարտքն ավելացել է, իսկ Կառավարությունը, տնտեսական աճը խթանելու նպատակով, պարբերաբար կիրառել է նոր պարտք ներգրավելու մեխանիզմներ:

Պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2020 թ. հատել է թույլատրելի 60 տոկոսի սահմանագիծը՝ գրանցելով իր առավելագույն մեծությունը՝ 67,4 տոկոս: 2024 թ. այն կազմել է ՀՆԱ 52.1%-ը, իսկ 2025 թ. կանխատեսումներով կկազմի ՀՆԱ 56.5%-ը:⁴³ ՀՆԱ-ի համեմատությամբ պարտքի ծավալների արագ աճը անկայունության ռիսկեր է պարունակում՝ չնայած պարտքի կառուցվածքում ներքին պարտքի առաջանցիկ տեմպերով աճին: 2023 թվականին ներքին պարտքն աճել է 31.1%-ով՝ մասամբ պայմանավորված Կառավարության կող-

⁴² ՀՀ ՎԿ տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_25%20Households/PS-hh-11-2022.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea_885bb

⁴³ Տե՛ս ՀՀ Կառավարության կայքէջ, 2025 թ. բյուջետային ուղերձ-բացատրագիր, էջ 204, https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t

մից արցախյան իրադարձությունների հետ կապված պարտքի վերակառուցմամբ: Իսկ արտաքին պարտքն աճել է առավել դանդաղ տեմպով՝ 3.8%-ով⁴⁴:

Կատարված վերլուծության արդյունքները հնարավորություն են ընձեռել առանձնացնելու Հայաստանի մակրոտնտեսական խոցելիության վրա ազդող էական գործոնները: Համեմատության նպատակով ընտրվել են նաև Հայաստանի հարևան երկրները՝ Վրաստանը, Թուրքիան, Իրանը և Ադրբեջանը, որպեսզի ստացված արդյունքները հնարավոր լինի համեմատել տարածաշրջանային համատեքստում, ինչը կարևոր է համադրողական վերլուծություններ կատարելու համար:

Աղյուսակ 1

Մակրոտնտեսական խոցելիության ինդեքս⁴⁵

Երկիր	Մակրոտնտեսական խոցելիության ինդեքս (1998–2010)	Մակրոտնտեսական խոցելիության ինդեքս (2011–2023)
Հայաստան	42.71	56.54
Վրաստան	41.92	24.76
Իրան	32.78	38.39
Թուրքիա	41.17	36.73
Ադրբեջան	44.06	42.92

Թվում է, թե վերջին տարիներին, չնայած իրականացված մակրոտնտեսական քաղաքականությանը, ընդունված հարկաբյուջետային կանոններին, 2008 թվականից հետո տնտեսական քաղաքականությունը ավելի շատ պետք է միտված լիներ տնտեսության շուկերի դիմագրավմանը, խոցելիության թուլացմանը, սակայն նկատում ենք, որ ինդեքսն աճել է՝ պայմանավորված 2016 թ. տրանսֆերտների, COVID-19 համավարակի շուկերով, աշխարհաքաղաքական լարված իրավիճակով: Բնականաբար, նկատում ենք, որ անհրաժեշտություն կա մշակելու և իրականացնելու մակրոտնտեսական քաղաքականություն, որը կհիմնվի կառուցվածքային բարեփոխումների, ռիսկերի կանխատեսման և կառավարման վրա՝ նպատակ ունենալով բարձրացնելու տնտեսության կայունությունը՝ հաշվի առնելով ներքին և արտաքին հնարավոր շուկերի ազդեցությունները:

Հետազոտության շրջանակներում հաշվարկված ինդեքսների վերլուծությունն ընդգծում է, որ տարածաշրջանի երկրներում մակրոտնտեսական խոցելիության դինամիկան զգալիորեն տարբերվում է՝ պայմանավորված ինչպես ներքին տնտեսական քաղաքականություններով, այնպես էլ արտաքին ազդեցություններով: Հայաստանում խոցելիության աճը հիմնականում պայմանավորված է պետական պարտքի բարձր մակարդակով և Ռուսաստանի նկատմամբ արտահանման կառուցվածքային կախվածությամբ: Վրաստանը ցուցադրում է որոշակի բարելավում՝ ֆիսկալ կարգապահության ամրապնդման և արտահանման բազմազանեցման շնորհիվ, մինչդեռ Թուրքիայում մակրոտնտեսական կայունության ապահովմանն ուղղված բարեփոխումները նպաս-

⁴⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, 2023, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability_Report_2023.pdf

⁴⁵ Վերլուծության համար հիմք են հանդիսացել մակրոտնտեսական խոցելիության վրա ազդող 10 ցուցանիշներ՝ 1998–2023 թթ. տարեկան տվյալներով:

տել են խոցելիության նվազմանը: Իրանի դեպքում պատժամիջոցների ազդեցությունն էականորեն խորացրել է տնտեսության խոցելիությունը, մինչդեռ Ադրբեջանի մակրոտնտեսական ցուցանիշները համեմատաբար կայուն են՝ չնայած արտաքին շուկաների մարտահրավերներին:


ՀՀ տնտեսության խոցելիության միջազգային գնահատումները, պայմանավորված գնահատման մեթոդաբանությամբ և ընտրված ցուցանիշների համախմբի լայնությամբ ու բազմազանությամբ, էականորեն տարբերվում են խոցելիության մակրոտնտեսական ինդեքսից:

Աղյուսակ 2


Բազմաչափ խոցելիության ինդեքսը ՀՀ-ում և տարածաշրջանի երկրներում, 2024 թ.⁴⁶

Երկիր	Բազմաչափ խոցելիության ինդեքս	Կառուցվածքային խոցելիության ինդեքս	Կառուցվածքային դիմադրողականության բացակայության ինդեքս
ՀՀ	49.4	46.7	52.0
Ադրբեջան	46.9	41.4	51.8
Վրաստան	38.6	29.1	46.2
Իրան	55.7	56.9	54.4
Թուրքիա	46.5	49.8	43

Տարածաշրջանի երկրների 2023 թ. բազմաչափ խոցելիության ինդեքսի ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանում ամենակայուն և պակաս խոցելի տնտեսությունն ունի Վրաստանը, այնուհետև՝ Թուրքիան և Ադրբեջանը, իսկ ամենախոցելին՝ Իրանը: Համեմատաբար ավելի խոցելի է նաև ՀՀ տնտեսությունը, որը նախորդում է Իրանին: Ընդ որում, կառուցվածքային ճկունության բացակայության ինդեքսը Հայաստանում և Ադրբեջանում գրեթե նույնն է և իր մեծությամբ զիջում է միայն Իրանի ցուցանիշին: Իսկ տարածաշրջանում ամենաճկուն տնտեսությունն ունի Թուրքիան: Կառուցվածքային խոցելիության ինդեքսով Հայաստանը զիջում է Իրանին և Թուրքիային: Վրաստանի և Ադրբեջանի տնտեսություններն ավելի քիչ են ենթակա շոկերի և քիչ խոցելի են:



⁴⁶ St'u UN, High level panel on the development of a Multidimensional Vulnerability Index, FINAL REPORT, February 2024, <https://digitallibrary.un.org/record/4049554?v=pdf>, <https://www.un.org/ohrlls/content/mvi-preliminary-country-scores>



Գծապատկեր 8. Հավաքական ռիսկի ինդեքսը և դրա բաղադրյալ ինդեքսները Հայաստանում և տարածաշրջանի երկրներում, 2015–2024 թթ.^{47, 48}


Այլ պատկեր ենք ստանում հավաքական ռիսկի ինդեքսի (INFORM Risk Index) և դրա բաղադրյալ ինդեքսների⁴⁹ համեմատական վերլուծության արդյունքում: Կառուցվածքային դիմադրողականության բացակայության ինդեքսի դինամիկան վկայում է, որ ՀՀ և Վրաստանի կառավարություններն ավելի մեծ ջանքեր են կիրառել տնտեսության ճկունության աստիճանը բարձրացնելու և աղետներին դիմակայելու ուղղությամբ: 2015–2024 թթ. դիտարկվող ցուցանիշը նվազման միտում է ունեցել բոլոր երկրներում՝ կայունանալով վերջին տարիներին:

խոցելիության ինդեքսի գնահատումներով տարածաշրջանի երկրների տնտեսությունների խոցելիությունն ընդհանուր միտումներ ունի, որը համընկնում է գլոբալ տնտեսության շուկերի ալիքներին՝ 2015–2019 թթ. ցուցանիշները նվազման միտում են դրսևորել, որը, սակայն, 2020–2024 թթ. փոխվել է աճի միտումի, բացառությամբ 2023 թ-ի: Քովիդ-19-ի և արցախյան հակամարտության հետևանքները մոտ 40 տոկոսով մեծացրել են նաև ՀՀ տնտեսության խոցելիությունը՝ 2,5-ից դարձնելով 3,5: Այս աճով հանդերձ՝ ՀՀ տնտեսությունը շարունակել է մնալ ամենացածր խոցելիություն ունեցողը տարածաշրջանում: 2024 թ. խոցելիության ամենաբարձր մակարդակ ունեցել է Թուրքիան, որի ինդեքսը կրկնակի գերազանցել է ամենացածր՝ ՀՀ ինդեքսը: Մյուս երկրների խոցելիությունը գնահատվել է հավասար մակարդակում:

⁴⁷ St'u World Bank Group, <https://prosperitydata360.worldbank.org/en/dataset/DRMKC+INFORM>

⁴⁸ St'u https://view.officeapps.live.com/op/view.aspx?src=https%3A%2F%2Fdrmkc.jrc.ec.europa.eu%2Finform-index%2FPortals%2F0%2FInfoRM%2F2025%2FINFORM_Risk_2025_v069.xlsx&wdOrigin=BROWSELINK

⁴⁹ St'u European Commission, INFORM Index for Risk Management, Concept and Methodology Version 2017, **Marin-Ferrer M., Vernaccini L., Poljansek K.**, Joint Research Centre 2017, <https://drmkc.jrc.ec.europa.eu/inform-index/INFORM-Risk/Methodology>



Գծապատկեր 9. Հավաքական ոլորտի ինդուստրիա և դրա բաղադրիչ ինդուստրիաները ՀՀ-ում և տարածաշրջանի երկրներում, 2015–2024 թթ.

Ի տարբերություն նախորդների՝ վտանգի և ազդեցության ինդեքսի (Hazard & Exposure Index) ցուցիչների դինամիկան խոսում է այն մասին, որ տարածաշրջանի երկրները ենթարկվում են տարբեր աստիճանի վտանգների: 2020–2021 թթ., արցախյան հակամարտությամբ պայմանավորված, Ադրբեյջանի հետ առճակատման վտանգը շոշափելի էր, որի հետևանքով ՀՀ վտանգի և ազդեցության ինդեքսը մոտ 4 անգամ աճել է՝ գրեթե հավասարվելով Ադրբեյջանի ցուցիչին՝ 8,4-ի շեմին: Հակամարտության մարման արդյունքում 2022 թ. ցուցիչը կայունացել է իր նախկին մակարդակում՝ 2,1: Երկու պետությունների այս ցնցումը տարածաշրջանի մյուս երկրների մոտ վտանգի մակարդակի չնչին փոփոխություն է առաջացրել: 2023 թ. վտանգի բարձր ռիսկի է ենթարկվել Իրանի տնտեսությունը՝ Մերձավոր Արևելքի հակամարտությամբ պայմանավորված:

Հավաքական ռիսկի ագրեգավորված ինդեքսի դինամիկայի համաձայն՝ ՀՀ-ն տարածաշրջանի երկրների համեմատությամբ ցածր խոցելիություն ունի, բացառությամբ 2020–2021 թթ.՝ հիմնականում պայմանավորված վտանգի և ազդեցության ինդեքսի, մասամբ էլ խոցելիության ինդեքսի (Vulnerability Index) աճով:

Հավաքական ռիսկն ամենաբարձրը Իրանում է, բացառությամբ 2020 թ., երբ Ադրբեյջանի ցուցանիշն առավել է եղել: Տարածաշրջանում ավանդաբար ցածր և կայուն ռիսկայնություն ունի Վրաստանը, որի ռիսկը, այնուհանդերձ, 2024 թ. ՀՀ-ից 30 տոկոսով բարձր է գնահատվել:

Ընդհանուր առմամբ, երկրների հավաքական ռիսկի ցուցանիշների շարժընթացը կոռելյացվում է՝ պայմանավորված տարածաշրջանային ռիսկերի ընդհանրությամբ:

Եզրակացություն: ՀՀ տնտեսության արտաքին խոցելիությունը հիմնականում պայմանավորված է Ռուսաստանի տնտեսությունից ունեցած մեծ կախվածությամբ: Դա արտահայտվում է թե՛ արտահանման, թե՛ ներմուծման ծավալներում ՌԴ զգալի մասնաբաժնով, այդ թվում՝ ռազմավարական ապրանքների: ՌԴ-ից ՀՀ տնտեսության կախվածությունը մեծացնում են նաև այնտեղից ուղղվող դրամական հոսքերը և անձնական տրանսֆերտները, որոնց ծավալները չնայած նվազման միտում ունեն, սակայն դեռևս էական են բնակչության եկամուտների ձևավորման մեջ:

Երկարաժամկետում Ռուսաստանի տնտեսությունից չափազանց մեծ կախվածությունը սահմանափակում է Հայաստանի տնտեսության բազմազանեցման և դիմադրողականության մակարդակը: Տնտեսական կամ քաղաքական լարվածության դեպքում Հայաստանի տնտեսությունը հայտնվում է ռիսկային իրավիճակում: Դա հանգեցնում է մակրոտնտեսական խոցելիության:

ՀՀ ամբողջական պահանջարկի կառուցվածքում տնային տնտեսությունների գերակշռող սպառողական ծախսերը մեծացնում են երկրի մակրոտնտեսական խոցելիությունը, քանի որ բնակչության սպառողական վարքագծի և նախասիրությունների փոփոխությունները կարող են ազդել տնտեսական կայունության վրա: Ընդհանուր առմամբ, սպառում/ՀՆԱ հարաբերակցության տատանումները արտացոլում են տնտեսության արտաքին ու ներքին սթրեսների հետևանքները՝ կապված համաշխարհային շուկերի, գնաճի, շուկայի անորոշությունների ու այլ գործոնների հետ: Տարեկան տատանումները ցույց են տալիս, որ տնտեսության բոլոր այս փոփոխություններն ազդում են սպառողների վարքագծի, նրանց սպառողական որոշումների կայացման մեխանիզմ-

ների վրա, ինչն ուղղակիորեն վերաբերում է տնտեսական խոցելիությանը:

Սպառողական ծախսերի աճը, հատկապես այն պատճառով, որ դրանց մի մասը կատարվում է վարկերի հաշվին, հանգեցնում է ֆինանսական ռիսկերի մեծացման: Բարձր անորոշության միջավայրում տնտեսական ակտիվության նվազման և գնաճային նոր ճնշումների առաջացման ռիսկերը շարունակում են պահպանվել: Այս պայմաններում առավել հավանական է տնային տնտեսությունների համար պարտքի սպասարկման դժվարությունների առաջացման ռիսկերի ձևավորումը, որոնց նյութականացումը կարող է որոշակի ճնշումներ առաջացնել տնային տնտեսությունների, հատկապես՝ ցածր եկամուտ և բարձր պարտքի բեռ ունեցողների վրա՝ խոցելիության տեսանկյունից:

Եկամուտների և զբաղվածության բարելավումը դրական ազդեցություն է ունեցել տնային տնտեսությունների պարտքի բեռի խոցելիության նվազման վրա: Այնուամենայնիվ, չնայած նվազման միտումին, գործազրկության դեռևս բարձր մակարդակը, հատկապես՝ մարզային անհամաչափ բաշխվածության համապատկերում, սահմանափակում է սպառողական հնարավորությունները՝ հանգեցնելով սոցիալական խնդիրների խորացման և արտագաղթի: Գործազրկության և աղքատության մարզային մակարդակների համահարթեցումը և նվազեցումը, աշխատաշուկայի բարեփոխումները, սոցիալական ծրագրերը, պրոգրեսիվ հարկման մեխանիզմի ներդրումը, կարող են նվազեցնել երկրի խոցելիությունը:

ՀՀ Կառավարությունը պետք է մշակի և իրականացնի արտադրական ներդրումները խթանող քաղաքականություն, ինչը թույլ կտա նվազեցնել կախվածությունը սպառման մակարդակից և բարձրացնել տնտեսության կայունության մակարդակը:

ՀՀ տնտեսության տարածքային զարգացման անհամաչափությունները և դրանցից ածանցվող խնդիրները ակնհայտորեն նվազեցնում են տնտեսության դիմադրողականությունը տարբեր շուկերի նկատմամբ և դժվարացնում հակազդման միջոցառումների արդյունավետությունը: Ուստի այս հիմնախնդրի լուծումը պետք է դառնա երկրի մակրոքաղաքականության առաջնային նպատակ:

Գնաճից սերվող ռիսկերի նվազեցման համար կարևոր են ներմուծման աշխարհագրական կառուցվածքի բազմազանեցումը և ներքին արտադրության խթանումը: Հարաբերական գնաճի անհամաչափությունը, երբ առաջին անհրաժեշտության ապրանքների գները, պայմանավորված ներմուծման թանկացմամբ, բարձրանում են ավելի արագ, մեծացնում է սոցիալ-տնտեսական անհավասարությունը: Սա կարող է ավելացնել Հայաստանի տնտեսական խոցելիությունը և վնասել երկրի կայունությունը, ինչպես նաև հանգեցնել սոցիալական լարվածության:

ՀՀ ֆինանսական համակարգի խոցելիությունը հիմնականում պայմանավորված է սպառողական և հիպոտեկային վարկերի մեծ ծավալներով և աճի միտումով, ինչպես նաև անշարժ գույքի շուկայի գերտաքացմամբ: Դրանք ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պահանջարկի ավելացման հետևանք են: Վերջինիս կրճատման նկատելի միտում կա, որը առաջիկայում կզսպի շուկի հետևանքով նկատված մեծ աշխուժությունը: Ընդհանուր առմամբ, տնտեսությանը տրամադրված վարկերի աճն ուղեկցվել է բարձր տնտեսական աճով, ուստի տնտեսության պարտքային բեռի և դրանից ածանցված վարկային ռիս-

կի էական աճ այլ վարկատեսականների գծով չի արձանագրվել:

Արտաքին մակրոմիջավայրի փոփոխությունների հանդեպ զգայուն են և արագ արձագանքում են իրական և անվանական արդյունավետ փոխարժեքները: Նկատի ունենալով, որ փոխարժեքների տատանումները ազդում են թե՛ արտաքին առևտրի, թե՛ ներքին տնտեսության կայունության վրա, այստեղ խոցելիության ռիսկեր ենք նկատում:

Չնայած կառուցվածքի բարելավման միտումներին՝ խոցելիության ռիսկեր կան կուտակված նաև պետական պարտքի մասով: Ըստ այդմ՝ պարտքի սպասարկումը կպահանջի հարկերի բարձրացում, որն էլ կզսպի տնտեսական ակտիվությունը, ինչին, ի դեպ, ակնատես ենք լինում ներկայում:

Ինչպես ՀՀ տնտեսության իրական, այնպես էլ ֆինանսական հատվածներում կուտակված են խոցելիության էական ռիսկեր: Անհրաժեշտ է ներդնել հակազդող մեխանիզմներ և փորձել կիրառել կայունացնող առաջանցիկ միջոցառումներ, ինչպիսիք են ռազմավարական ներմուծման աշխարհագրական բազմազանեցումը, ՀՀ մարզերի զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի կիրառումը, այդ թվում՝ լոգիստիկայի բարելավումը, բնակչության ինքնազբաղվածության աճին ուղղված քայլերը, ինչպես նաև պետական ծախսերի արդյունավետությանն ուղղված միջոցառումները:

Խոցելիության այսպիսի պատկերը պայմանավորված է հատկապես արտահանման, անձնական փոխանցումների կառուցվածքում Ռուսաստանի մեծ մասնաբաժնով, պետական պարտքի՝ ՀՆԱ-ի նկատմամբ առաջանցիկ աճով, իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների՝ արտաքին շուկաների նկատմամբ մեծ զգայունությամբ, ամբողջական պահանջարկի կառուցվածքում սպառողական ծախսերի աներկբա գերակշռությամբ և սոցիալական ոլորտում կուտակված խնդիրներով:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ մակրոտնտեսական խոցելիությունը համակարգված մոտեցման կարիք ունի: Անհրաժեշտ է պետական քաղաքականությունն ուղղել տնտեսական, ֆինանսական համակարգի կայունության ձեռքբերմանը և սոցիալական խնդիրների լուծմանը:

Օգտագործված գրականություն

1. Ավագյան Գ., Վարդանյան Ք., Գրիգորյան Կ., Տնտեսության իրական և ֆինանսական հատվածների խզման հաղթահարումը որպես տնտեսական ցնցումների (շոկերի) դիմագրավման պայման, ՀՀ ՊԿԱ «Հանրային կառավարում» գիտական հանդես, N2, «Պետական ծառայություն» հրատարակչություն, Եր., 2019, էջ 113-119, <https://paara.am/wp-content/uploads/2012/04/HK-2019-2.pdf>
2. Բազինյան Ե., Բեջանյան Հ., Այրումյան Ա., Կարապետյան Ն., Ռոստոմյան Տ., ՀՀ տնտեսության վրա ազդող արտաքին շոկերը և դրանց տարածման ուղիները, «Բանբեր ՀՊՏՀ», 3(59), 2020, էջ 10-26, <https://asue.am/upload/files/science/banber/2020-year-3/1.pdf>
3. Մկրտչյան Թ., Ղարաբյոզյան Մ., Պողոսյան Վ., Յորենի միջազգային գների փոփոխությունը պայմանավորող գործոններն ու դրանց ազդեցությունը ՀՀ ցորենի և ալյուրի շուկաների վրա, «Բանբեր ՀՊՏՀ», 4(60), ISSN 1829-0280, Եր., 2020, էջ 109, <https://asue.am/upload/files/science/banber/2020-year-4/6.pdf>

4. ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2023:
5. ՀՀ ՎԿ տվյալների բազա, <https://www.armstat.am/am/>
6. ՀՀ ՎԿ տվյալների բազա, ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքախմբերի/ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb
7. ՀՀ ԿԲ, Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն (2021 թ. 1-ին եռ. - 2021 թ. 4-րդ եռ.), <https://www.cba.am/AM/ppperiodicals/MP%20report%202021Q4.pdf>
8. ՀՀ ԿԲ, Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն (2022 թ. 1-ին եռ. - 2022 թ. 4-րդ եռ.), <https://www.cba.am/AM/ppperiodicals/MP%20report%202022Q4.pdf>
9. ՀՀ ԿԲ տվյալների բազա, <https://www.cba.am/am/sitepages/default.aspx>
10. ՀՀ ՎԿ տվյալների բազա, [https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_1%20Economy%20and%20finance_15%20National%20Accounts_151%20SNA%202008_1511%20Annual%20data_15112%20Expenditure%20of%20GDP%20\(by%20main%20consumption%20elements\)/EF-NA-08AE01.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb](https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_1%20Economy%20and%20finance_15%20National%20Accounts_151%20SNA%202008_1511%20Annual%20data_15112%20Expenditure%20of%20GDP%20(by%20main%20consumption%20elements)/EF-NA-08AE01.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb)
11. Համաշխարհային բանկի տվյալների բազա, <https://www.worldbank.org/ext/en/home>
12. ՀՀ ԿԲ տվյալների բազա, արտաքին հատված, <https://www.cba.am/am/sitepages/default.aspx>
13. ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2024, էջ 34, https://armstat.am/file/article/marzer_2024_5.pdf
14. Համաշխարհային բանկի տվյալների բազա, <https://data.worldbank.org/indicator/SM.POP.NETM>
15. ՀՀ ՎԿ կայքէջ, Ժամանակագրական շարքեր, <https://armstat.am/am/?nid=12&id=01510>
16. ՀՀ Կառավարության կայքէջ, 2025 թ. բյուջետային ուղերձ-բացատրագիր, էջ 204, https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t
17. ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2023, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability_Report_2023.pdf
18. UN, High level panel on the development of a Multidimensional Vulnerability Index, February 2024 Final Edited Version, <https://digitallibrary.un.org/record/4049554?v=pdf>
19. UNDRR Annual Report 2019, <https://www.undrr.org/publication/undrr-annual-report-2019>
20. David Sondermann, Nico Zorell. A macroeconomic vulnerability model for the euro area. European Central Bank 2019, p. 3, <https://www.ecb.europa.eu/pub/pdf/scpwps/ecb.wp2306~8907aafca2.en.pdf>
21. Briguglio L., Gordon C., Farrugia N., Vella S., Economic vulnerability and resilience concepts and measurements. WIDER Research Paper, No. 2008/55, page 3, <https://www.econstor.eu/bitstream/10419/45146/1/571437761.pdf>

22. Seth A., Ragab A., Macroeconomic vulnerability in developing countries: Approaches and issues. Working Paper, No. 94, 2012, page 4,
<https://www.econstor.eu/bitstream/10419/71809/1/72073648X.pdf>
23. Klompa J., De Haan J., Political institutions and economic volatility. Eur J Polit Econ. 2009, 25(3):311–26.
24. Edo S., Oigiangbe O. B., External debt vulnerability in developing countries: the economic and policy perspectives, Apr 2024, Journal of Financial Economic Policy, DOI: [10.1108/JFEP-05-2023-0129](https://doi.org/10.1108/JFEP-05-2023-0129)
25. Republic of Armenia. IMF Country Report, No. 23/416, 2023,
<https://doi.org/10.5089/9798400262418.002>
26. UN, Committee for Development Policy, Review of the least developed country criteria, 2023,
<https://www.un.org/development/desa/dpad/wp-content/uploads/sites/45/CDP-excerpt-2023-4.pdf>
27. Fondasyon FERDI. The Retrospective Economic Vulnerability Index, 2015 Update,
<https://ferdi.fr/en/indicators/a-retrospective-economic-vulnerability-index>
28. United Nations, Department of Economic and Social Affairs, Least Developed Countries, LDC Data, “Time series estimates”,
<https://www.un.org/development/desa/dpad/least-developed-country-category/ldc-data-retrieval.html>)
29. Cariolle J., *The Economic Vulnerability Index- 2010 Update*, Working Papers 109, FERDI, 2011.
30. Guillaumont P., An economic vulnerability index: its design and use for international development policy. Oxf Dev Stud. 2009, 37(3), 193–228.
31. Al-Faiz M. Z., Ibrahim A. A., Hadi S. M., The effect of Z-Score standardization (normalization) on binary input due the speed of learning in back-propagation neural network. 2019,
DOI:[10.31987/ijict.1.3.41](https://doi.org/10.31987/ijict.1.3.41)
32. Abdi H. and Williams L. J., Principal component analysis 2010,
<https://personal.utdallas.edu/~herve/abdi-awPCA2010.pdf>
33. European Commission, INFORM Index for Risk Management, Concept and Methodology Version 2017, Marin-Ferrer M., Vernaccini L., Poljansek K., Joint Research Centre 2017,
<https://drmkc.jrc.ec.europa.eu/inform-index/INFORM-Risk/Methodology>
34. https://www.un.org/ohrlls/sites/www.un.org.ohrlls/files/final_mvi_report_1.pdf, <https://drmkc.jrc.ec.europa.eu/inform-index/INFORM-Risk/Methodology>
35. UN, High level panel on the development of a Multidimensional Vulnerability Index, p. 15, https://www.un.org/ohrlls/sites/www.un.org.ohrlls/files/final_mvi_report_1.pdf
36. UN, High level panel on the development of a Multidimensional Vulnerability Index, FINAL REPORT, February 2024,
<https://digitallibrary.un.org/record/4049554?v=pdf>,
<https://www.un.org/ohrlls/content/mvi-preliminary-country-scores>
37. World Bank Group,
<https://prosperitydata360.worldbank.org/en/dataset/DRMKC+INFORM>

ТАТУЛ МКРТЧЯН

*Заведующий кафедры прикладной экономики АГЭУ,
доктор экономических наук, профессор*

КНАРИК ВАРДАНЯН

*Доцент кафедры прикладной экономики АГЭУ,
кандидат экономических наук*

ГАЯНЕ АВАГЯН

*Доцент кафедры прикладной экономики АГЭУ,
кандидат экономических наук*

МЕЛАНЬЯ КАРАГЕЗЯН

Преподаватель кафедры прикладной экономики АГЭУ

Оценка макроэкономической уязвимости экономики

РА.– В последние годы возрос интерес к экономической уязвимости развивающихся стран. Многочисленные экономические кризисы этого десятилетия подчеркивают уязвимость этих стран к колебаниям на международном рынке, а значительные различия в масштабах и характере последствий подчеркивают необходимость дифференцированного подхода. В ходе экономического развития Армении возник ряд проблем и внутренних макроэкономических дисбалансов, которые усиливают внешние шоки и делают экономику более уязвимой. В результате изменений в мировой экономике, таких как сбои в цепочках поставок и нестабильность на финансовых рынках, существенно ограничивают потенциал экономического развития Армении. С целью оценки макроэкономической уязвимости экономики Армении были выяснены основные факторы, способствующие формированию экономической нестабильности, и на их основе разработан индекс макроэкономической уязвимости. Исследованы тенденции изменения компонентов, лежащих в основе расчета индекса уязвимости, с учетом глобальных изменений в мировой экономике. С точки зрения уязвимости прослеживаются не только тенденции экономического развития, но и выявляется, на каком этапе экономического развития какие риски или уязвимости становятся первичными. Проведенный анализ позволил определить, какое влияние и через какие каналы оказывают дисбалансы внешней макросреды на малую открытую экономику, в частности, экономику Республики Армения.

Ключевые слова: *экономическая уязвимость, риски уязвимости, экономическая стабильность, экономические потрясения*

JEL: C82, E60

DOI: 10.52174/29538114_2025.1-9

TATUL MKRTCHYAN

*Head of the Chair of Applied Economics at ASUE,
Doctor of Economics, Professor*

KNARIK VARDANYAN

*Associate Professor of the Chair of Applied Economics at ASUE,
PhD in Economics*

GAYANE AVAGYAN

*Associate Professor of the Chair of Applied Economics at ASUE,
PhD in Economics*

MELANYA GHARAGYOZIAN

Lecturer of the Chair of Applied Economics at ASUE

Assessment of Macroeconomic Vulnerability of the RA Economy. – In recent years, interest in the economic vulnerability of developing countries has increased. The numerous economic crises of this decade indicate the vulnerability of these countries to international market fluctuations, and significant differences in the size and nature of the impacts emphasize the need for a differentiated approach. During the economic development of the RA, a number of problems have been formed, macroeconomic internal imbalances, which intensify external shocks and make the economy more vulnerable. As a result, changes in the global economy, such as disruptions in supply chains, instability in financial markets, significantly limit the potential for economic development of the RA. In order to assess the macroeconomic vulnerability of the RA economy, the main factors contributing to the formation of economic instability have been clarified and a macroeconomic vulnerability index has been developed based on them. The trends in the components underlying the calculation of the vulnerability index were studied, considering them in the context of global changes in the world economy. From the perspective of vulnerability, not only the trends in economic development were observed, but also it was revealed at which stage of economic development which risks or vulnerabilities become primary. The analyses performed allowed us to find out what impact the imbalances of the external macroenvironment have on a small open economy, in particular, on the economy of the Republic of Armenia, and through what channels.

Keywords: *economic vulnerability, vulnerability risks, economic stability, economic shocks*

JEL: C82, E60

DOI: 10.52174/29538114_2025.1-9